<< Բերդի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի կողմից << Տնտեսական նյութեր >> ՀՈԴՎԱԾՈՎ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 27 ԱՊՁԲ

11 մարտի 2016թ

ք. Բերդ

Տավուշի մարզի <<Բերդի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի տնօեն Լ, Գրիգորյան որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև` «Գնորդ» մի կողմից և Անուշ Մելիքբեկյան ԱՁ-ն այսուհետև` «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված (այսուհետև` Համաձայնագիր), որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը, սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել նախատեսված պարանքները Իսկ Գնորդը պարտավորվում է, ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը, ինչպես նաև քանակի գերազանցմամբ մեկին կամ մի քանիսին Ապրանքի հանձնումը չի ծածկում մյուս Ստացողներին թերի հանձնվածը:

## 2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Համաձայնագրերով նախատեսված Ստացողներին (այսուհետև` Ստացող)` դրանցում նշված ծավալներով և ժամկետներում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1 Գնորդն իրավունք ունի`

3.1.1 Ապրանքը Համաձայնագրերով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են .

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` սույն պայմանագրի 1.1 կետում նշված բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա)Պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ)Չընդունել Ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարած գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Համաձայնագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք , ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց ,իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա` պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ)պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր , սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք` սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն` Համաձայնագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույ պայմանագիրը .

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում , եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որոկի Ապրանք, որը չի կարող փոխարինել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է`

3.2.1 Ապահավել Համաձայնագրերում նշված Ստացողների կողմից Ապրանքի ստացումը:

3.2.2 Վաճառողի հանձնված Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում , ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանումը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:
3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնութագրից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունել սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.
3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Համաձայնագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանքը համապատասխան Համաձայնագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:
3.3.3 Գնորդից (Ստացողից) պահանջել վճարելու համապատասխան Համաձայնագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները;
3.3.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:
3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:
3.3.5 Գնորդի (Ստացողի) համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարելու Ապրանքը:Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվելու է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

**3.4 Վաճառողը պարտավոր է**

3.4.1 Իրականացնել Ապրանքի մատակարարումը համաձայնագրով նշված Ստացողներին:
3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետի համապատասխան՝ Ապրանքը Գնորդին (Ստացողին) մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:
3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
3.4.4 Գնորդին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանքը:
3.4.5 Գնորդին (Ստացողին) հանձնել սույն պայմանագրի (Համաձայնագրի) N 1 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Համաձայնագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
3.4.6 Առանձին փուլում բերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում լրացնել բերի մատակարարվածը:
3.4.7 Հետ տանել Գնորդի (Ստացողի) կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողին հանձնած Ապրանքի ընդհանուր գինը կազմում է 77.0 հազ. դրամ , ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքի միավորի գինը սահմանվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով : Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները , ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
4.2 Ապրանքի մատակարարման գինը կարող է փոխվել կողմերի համաձայնությամբ :
4.3 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ դրամական միջոցները Վաճառողին հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով :
Դրամական միջոցների փքխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Համաձայնագրի համապատասխան հավելվածով ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցով նախատեսված ամսում , բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով վճարման ժամանակահատվածով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքների դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

## 5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Համաձայնագրում նշված Ստացողներին՝ Գնորդի ներկայացուցչի մասնակցությամբ , նշված ծավալներով և ժամկետներում , սույն պայմանագրի 3.2.1 կետի համապատասխան Գնորդի կողմից հաստատված բաշխացուցակին համապատասխան :
6.1.1 Վաճառողն Ապրանքի հանձնման (Համաձայնագրով նախատեսված Ապրանքի հանձնման փուլի) ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակը:

6.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:
6.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Համաձայնագրերով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 տոկոսի չափով:
7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողի կողմից մատակարարված Ապրանքի համար վճարման ենթակա գումարներից:
7.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանքը մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք Համաձայնագրի ընդհանուր գնի 0,05 տոկոսի չափով:
7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համարհաշվարկվում է տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով:
7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Համաձայնագրերի կնքումը

8.1 Գնման պահանջ առաջանալու դեպքում գնորդը ծանուցում է այդ մասին Վաճառողին կցելով Համաձայնագրի նախագծի և օժանդակ հավելվածների երկու օրինակը:
8.2 Ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողը ստորագրում, կնքում և Գնորդին է վերադարձնում 8.1 կետում նշված փաստաթղթերը:
8.3 Գնորդն իր կողմից ստորագրում, կնքում և Վաճառողի կողմից հաստատված Համաձայնագիրը և օժանդակ հավելվածները և դրանց մեկ օրինակը վերադարձնում է Մատակարարին:

## 9. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 10. Այլ պայմաններ

10.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2016 թ. դեկտեմբերի 30-ը:
10.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր (Համաձայնագիր) կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի(Համաձայնագրի) անբաժանելի մասը:
10.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
10.4 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի թիվ 1, 2 և 3 հավելվածները՝ բաղկացած 3 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Բերդի պետական քոլեջ>> ՊՈԱԿ | ԱՁ Անուշ Մելիքբեկյան |
| ք. Բերդ Մաշտոցի 2 | ք. Բերդ Մանուկյան 9 |
| ԱՇԻԲ «Տավուշ» մ/ճ | ԱՇԻԲ «Տավուշ» մ/ճ |
| Հ/Հ 2477800820270000, ՀՎՀՀ 07801286 | Հ/Հ 2477802099840000, ՀՎՀՀ 71705951 |
| Տնօրեն __________ /Լ. Գրիգորյան/ | Տնօրեն՝ __________ /Ա. Մելիքբեկյան/ |
| | մ/կ |

Հավելված 1
2016թ. կնքված N ԱՊՁԲ
գնման պայմանագրի

# Տեխնիկական բնութագիր

| Ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափի միավորը |
|---|---|---|
| Հատակի լվացման լաթ | /գործվածք/ լաթեր 45 X80 սմ բամբակյա գործվածքից` հատակը լվանալու համար | հատ |
| Ապակի մաքրելու միջոց | չափածրարված 0.5կգ զանգվածով: Անվտանգությունը նակնշումը և փաթեթավորումը` ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և նակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» | հատ |
| Փոշու հավաքման կտորներ | /գործվածք/ լաթեր 25 X25 սմ բամբակյա գործվածքից` փոշի մաքրելու համար | հատ |
| էլեկտրական երկարացման լար | Չափսը: 3տ 5 մ կամ 3տ 10 մ: 110 Ա, 250 Վ միացման մանրակներով , ԳՕՍՏ Ռ 51324.1-99 կամ համարժեք: Անվտանգությունն` ըստ ԳՕՍՏ 12.2.007.0-75 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" | հատ |
| Վարդակ | Վարդակ 1 կամ 2 տեղանոց պլաստմասսայէ UL-94V, 1 port RJ11 բնիկով, 1 տեղանոց, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը` R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը` մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունը` ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավո¬րումնե-րին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» | հատ |
| Ավել | Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ | հատ |

| | | |
|---|---|---|
| Էլեկտրական լամպ 60 W, 80 W, 100 W | Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, ԳՕՍՏ 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե հատ | հատ |
| Ներկ, շինարարական | Ակրիլ դաի ներկ է: Տեղափոխվում է4-5լ մետաղյա տարաներով, ԳՕՍՏ 28196-89 կամ համարժեք, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1647-Նորոշմամբ հաստատված «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգի» | հատ |
| Վրձին, ներկարարական աշխատանքներ կատարելու համար | Վրձին ներկարարական աշխատանքներ կատարելու համար տարբեր տիպերի ԿՌ, ԿՌՍ, ԿՌՕ, ԿՊ, ԿՄ, ԿՄԱ, ԿՖ, ԿՖԿ (KP, KPC, KPO, Խկ, ԽԾ, ԽԾԸ, ԽՂ, ԽՂԽ) Ներկող մասի երկարությունը 15 սմ, փայտե բռնակով համաձայն ԳՕՍՏ 10597-87 | հատ |

**Գ Ն Ո Ր Դ**

<<Բերդի պետական քոլեջ>> ՊՈԱԿ
ք. Բերդ Մաշտոցի 2
ԱՇԻԲ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477800820270000, ՀՎՀՀ 07801286

Տնօրեն՝ ________ /Լ. Գրիգորյան/

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

ԱՁ Անուշ Մելիքբեկյան
ք. Բերդ Մանուկյան 9
ԱՇԻԲ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477802099840000, ՀՎՀՀ 71705951

Տնօրեն՝ ________ /Ա. Մելիքբեկյան/

Հավելված 2
2016 թ. կնքված N ԱՊՁԲ
գնման պայմանագրի

# Գնման ժամանակացույց

Հազար դրամ

| N | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Չափի միավորը | Միավորի նախահաշվային գինը ( դրամ ) | Նախատեսվում է գնել 2016թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Iեռամսյակ | | IIեռամսյակ | | IIIեռամսյակ | | IVեռամսյակ | | | |
| | | | | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | Քանակ | Գումար |
| 1 | Հատակի լվացման լաթ | հատ | 0.7 | 5 | 3.5 | 5 | 3.5 | 5 | 3.5 | 5 | 3.5 | 20 | 14.0 |
| 2 | Ապակի մաքրելու միջոց | հատ | 0.4 | 2 | 0.8 | - | - | 1 | 0.4 | 2 | 0.8 | 5 | 2.0 |
| 3 | Փոշու հավաքման կտորներ | հատ | 0.1 | 5 | 0.5 | 5 | 0.5 | 5 | 0.5 | 5 | 0.5 | 20 | 2.0 |
| 4 | Էլեկտրական լամպ 60W, 80W, 100W | հատ | 0.1 | 10 | 1.0 | - | - | - | - | 10 | 1.0 | 20 | 2.0 |
| 5 | Վարդակ | հատ | 0.7 | - | - | 5 | 3.5 | 5 | 3.5 | - | - | 10 | 7.0 |
| 6 | Էլեկտրական երկարացման լար | հատ | 1.5 | - | - | - | - | - | - | 2 | 3.0 | 2 | 3.0 |
| 7 | Ավել | հատ | 1.0 | 3 | 3.0 | 3 | 3.0 | 3 | 3.0 | 3 | 3.0 | 12 | 12.0 |
| 8 | Ներկ շինարարական | հատ | 6.8 | 2 | 13.6 | - | - | 3 | 20.4 | - | - | 5 | 34.0 |
| 9 | Վրձին ներկարարական աշխատանքների | հատ | 0.5 | 1 | 0.5 | - | - | 1 | 0.5 | - | - | 2 | 1.0 |
| | Ընդամենը | | X | X | 22.9 | X | 10.5 | X | 31.8 | X | 11.8 | X | 77.0 |

ԳՆՈՐԴ
<<Բերդի պետական քոլեջ>> ՊՈԱԿ
ք. Բերդ Մաշտոցի 2
ԱՇԻԲ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477800820270000, ՀՎՀՀ 07801286

Տնօրեն՝ ____________ /Լ. Գրիգորյան/

ՎԱՃԱՌՈՂ
ԱՁ Անուշ Մելիքբեկյան
ք. Բերդ Մանուկյան 9
ԱՇԻԲ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477802099840000, ՀՎՀՀ 71705951

Տնօրեն՝ ____________ /Ա. Մելիքբեկյան/

Հավելված 3
2016թ. կնքված N ԱՊՁԲ
գնման պայմանագրի

## Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

Հազար դրամ

| N | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | Iեռամսյակ | IIեռամսյակ | IIIեռամսյակ | IVեռամսյակ | |
| 1 | Հատակի լվացման լաթ | 3.5 | 7.0 | 10.5 | 14.0 | 14.0 |
| 2 | Ապակի մաքրելու միջոց | 0.8 | 0.8 | 1.2 | 2.0 | 2.0 |
| 3 | Փոշու հավաքման կտորներ | 0.5 | 1.0 | 1.5 | 2.0 | 2.0 |
| 4 | Էլեկտրական լամպ 60W, 80W, 100W | 1.0 | 1.0 | 1.0 | 2.0 | 2.0 |
| 5 | Վարդակ | - | 3.5 | 7.0 | 7.0 | 7.0 |
| 6 | Էլեկտրական երկարացման լար | - | - | - | 3.0 | 3.0 |
| 7 | Ավել | 3.0 | 6.0 | 9.0 | 12.0 | 12.0 |
| 8 | Ներկ շինարարական | 13.6 | 13.6 | 34.0 | 34.0 | 34.0 |
| 9 | Վրձին ներկարարական աշխատանքների | 0.5 | 0.5 | 1.0 | 1.0 | 1.0 |
| | Ընդամենը | 22.9 | 33.4 | 65.2 | 77.0 | 77.0 |

ԳՆՈՐԴ
«Բերդի պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Բերդ Մաշտոցի 2
ԱՇԻԲ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477800820270000, ՀՎՀՀ 07801286

Տնօրեն՝ ____________ /[illegible] Գրիգորյան/

ՎԱՃԱՌՈՂ
ԱՁ Անուշ Մելիքբեկյան
ք. Բերդ Մանուկյան 9
ԱՇԻԲ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477802099840000, ՀՎՀՀ 71705951

Տնօրեն՝ ____________ /Ա. Մելիքբեկյան/